կիմաւոր, և բոլորաձեւ. պայծառ կամ մութ գեղնա-
գոյն է, ուժնային փայլունութիւն մը ունի, կ'ըլլայ
թափանցիկ կամ դիմահար: Խսութիւնն հաւասար է
ջրոյ խոռոշեան՝ գաճէն աւելի կարծր է: Եփուելով
ախորդելի հոտ մը կ'արձակէ և կ'ելեկորանայ, և այս
յատկութիւնը ի վաղուց ծանօթ էր թաղէսի: Կ'այրի
խնկաւէտ հոտ մը բուրելով:


93. ԿԵՍՅ. ASPHALTE. -
Կը գտնուի հոծ, ցանուցիր,
գնդաձև վիճակաւ. գոյնը սև
կամ թխորակ կ' պլայ, պա-
րարտ փայլք մը ունի. շփռ-
ելով կամ տաքնալով կըպ-
րային հոտ մը կը բուրե-
կը հալի և կ'այրի գեւրու-
թեամբ՝ լուսաւոր բոց մը
հանելով և խիտ ծուխ ար-
ձակելով:

Գամկելու գամկելի կարծքը չէ,
խտութիւնն զրոյ հաւասար է:



94 75. - Umß.

Առաջարկութեամբ կը գտնուի ի Մեռեալ ծով, Երբողութեան
կղզոյի մէջ և ի Մուսով։
Ասով կը ծիփեալ յատակներ, Բաւերու կողերմ, Թակ ջաւ-
րակաց հնետ կը խառնեմ և այլ։



Ձև 76. — Քարիւղի աղբիւր:

94. ՔԱՐԻՒՂԻ. PÉTROLE. — Զրէն աւելի թեթև հեղանիւթ մ'է. դիւրավառ, յատուկ անախորժ հոս մը ունի, լուսաւոր և ծխոտ է բոցը: Երբեմն ջրոյ պէս յստակ կ'ըլլայ, երբեմն թուխ դեղնորակ կամ պէս : Բացօթեայ մնալով կը թանձրանայ և վերջապէս հաստատուն վիճակի կը փոխարկի:

Նշանաւոր եթ գաքուի և շիրազի քարիւղի աղբիւրներ: 1861էն սկսեալ գտնուած եթ հիւսիսային Ամերիկայի կողմերն օշանաւոր քարիւղեր (Ձև 76), մասնապէս փոքր Ասիոյ կողմերն կը գտնուիմ այս աղբիւրներէն ինչպէս ի վաՅ (Գուծոթ), ի Մարավոնի (Լազիստան): Քարիւղի մեծ մասը լուսաւորութեան կը գործածուի և մնացածն յարուեստու բժշշկութեան:

Ուտինաք բրածոյ են՝ երբեմն հաստատուն՝ երբեմն հեղոնիւթ կ'ըլլան. հաստատունք մետաղնաման, տեսք մը ունին, գոյնք դեղին թուխ կամ ուե. քիչ կարծր. տեսակաբար կշխոնին 1. 6 կ'ըլլայ: Զրոյ մէջ անլուծատեսակաբար հանաւոր հոտ մը արձակելով կը վասին: կան են, մասնաւոր հոտ մը արձակելով կը տարբերին ուրիշ հեղուկ ռետինք բոլորովին կը տարբերին ուրիշ հեղուկ հանգերէն, իրենց հոտով և այրելով:



ԺԷ. ՄԱՍՆ

ԺԷ. ԱՃՈՒԼԻ.

ա) Մետաղեայ փայլութեամբ.

95. ԳՐՉԱԲԱՐ. GRAPHITE. — Քիչ անդամ բիւրեղացած կ'ըլլայ թիթեղնաձև, տարանկիւնանիստ դրութեամբ, շատ անգամ ցանուցիր կը գտնուի, կամ հոծ վիճակաւ։ Մետաղակերպ տեսք մը ունի, երկաթագոյն սև կամ պողովատագոյն գորշ կ'ըլլայ. դիրաբեկ է, կափուղ, որով զայն բռնած ժամանակ ձեռուընիս կը սենայ։ Ջրէն երկու անգամ աւելի կը կշռէ։ Գրեթէ բոլորովին զուտ բնածխէ կը բաղկանայ, օդէն անայլայլակ է։ Նմանապէս ի թթուուսու։ Բարձրաստինան ջերմութեամբ կ'այրի զօրաւոր օդոյ հոսանաց մէջ։ Շատ անգամ երկաթային և ուրիշ նիւթեր կը պարունակէ։

Ամենէն պատուական գրչաքարմ կ'ելմէ Ամգլիայէն, Պավերայէն, Սէյլաթէն և Սիպերիայէն։ Յարուեստս շատ կը զործածուի և աւելի զրելու համար։

96. ԱԾԽԱԲԱՐ. ANTHRACITE. — Առ ածուխ մ'է, մետաղանման տեսքով։ Ցնդական նիւթեր չի պարունակեր. շատ գժուարաւ կ'այրի, և այրելու համար զօրաւոր օդոյ հոսանք մը պէտք է. բոց, ծուխ, և հոտ չի հաներ։

Խաւ խաւ կը գտնուի գետմակաց մէջ. և ամենէն շատ չիւսիսային Ամերիկոյ կողմերմ, Գաղղիակամ և Հոտալակամ Ապենինեաց վրայ կը գտնուի։ Տնակամ գործերու և մարտարապուեստից մէջ աւելի կը գործածուի։

բ) Առանց մետաղական փայլի.


97. ՀԱՆՔԱԾՈՒԽ. LITHANTHRAX. — Առ է, կը բաղկանայ ի բնածխոյ, ի ջրածնէ և ի թթուածնէ. բար-

ձրաստիճան ջերմութեամբ այս նիւթերէն մի քանիք կը սկսին կազանալ։ Եւ նոյն ատեն հանքածուխը կպրային հոտ մը կը բուրէ և ծխոտ բոց մը կը հանէ։ Կան զանազան հանքածուխք ինչպէս են.

Պարարտ հանքածուխ որ հրոյ ազգեցութեամբ դիւրաւ կը մածնու և յառաջ կը բերէ ուռած սպնդային, մոխրագոյն, սերակ և մետաղանման տեսքով նիւթ մը որ է քոք օօկե,

Զօր հանքածուխ. չի մածնուր և առանձին ծակոտէն քոք մը կու տայ։

Վտիս հանքածուխ կամ հոծ ածուխ. գրեթէ ամենակին փայլք չունի, անբաւ ցնդական նիւթեր կը պարունակէ և ըստ բաւականի լուսաւոր բոցով մը կը վառի։



Ձև 77. — Հանքածուխք:

Ամենէն շատ հանքածուխ կ'ելմէ Ամգլիայէն, Գելֆիայէն, Գերմանիայէն, Գաղղիայէն, Միացիալ նահանգէն։ Գերմանիայէն, Գաղղիայէն, Միացիալ նահանգէն։ Համբածխով (Ձև 77) կը պատրաստին լուսաւորութեամ կազ, քոք, կպրածիթ, կեղեցիկ գումաւորիչ նիւթեր և այլն։

98. **ՓԱՅՏԱՔԱՐ**. LIGNITE. — Թուխ կամ սև կ'ըլլայ. կիզման ժամանակ կ'արձակէ ծխոտ բոց մը և անախորժ հոտ մը, և կը բաղկանայ բնածիւէ, թթոււածնէ, լրածնէ և հողային նիւթերէ:

Կան զանազան փայտաքարինք, ինչպէս օրինակի համար.

Հոծ փայտաքար. սա փայտեղէն կազմուածք մը չունի: Բուն փայտաքար. փայտեղէն կազմուածք մը ունի և երբեմն այնպէս անարատ մնացած կ'ըլլայ՝ որ վրան դիւրաւ կ'աշխատուի՝ իրբեթէ սովորական փայտ մը ըլլար:

Հողային փայտաքար՝ դիւրափիքուն է:

Թիթեղնային փայտաքար տերեւոյին կազմուածք մը ունի:

Փայտաքարը համքածիւէ աւելի ընտիր չէ. թէև զիւրաւ կը վասի բայց յիշեալ ածուիմբում օգուտմ չունի: Գերմանիայի, Աւստրալիայի և Ամերիկայի մէջ փայտաքար շատ կը գտնուի:

99. **ՀՈՂԱԾՈՒԽ**. TOURBE. — Սպընդային նիւթմ'է՝ բաց աստի հողային կամ նեարդային կ'ըլլայ, սև կամ թխորակ, ծանր և կաղապարիչ՝ երբ թաց է, բայց երբ չորցած ըլլայ՝ թեթև է և ջոյ երեսը կը լորզայ: Չոր հողածուխը դիւրաւ կ'այրի շատ մոխիր թոլլով: Մամոց մնացորդներէն բաղկացած է:

Մինչև ցայսօր դեռ կը ծևամատ այսպիսի հողածուխը ի գերմանիա, իտալիանաքա, յիուլատա: Վերջապէս շատ տեղեր մէծ տարածութեամբ կը գտնուի այս ածուխիւն: Ըստիր հողածուխը փայտաքարերէն աւելի յարգի եմ, վասն զի իրենց տուած ջերմութիւնը աւելի ազդու է:

Հաստատուն մարմիններ են Աճուխը, գրեթէ բընաւ բիւրեղացած չեն, մետաղանման տեօք մը չունին. Երենց գոյնը սև կամ թուխ կ'ըլլայ, քիչ է թէ կարծրութիւննին և թէ խտութիւննին: Մեծաւ մասամբ բնածիւէ կը բաղկանան և բոյսերէ յառաջ կու դան: Շատ դորժածական և առատ են:

ՃԸ. ՄԱՍՆ

ԺԸ. Կարեւոր տեղեկութիւնք պարզ մարմնոց վրայ:

Մինչև ցարդ կը ճանչնամք 67 պարզ այսինքն անտարրաբաշխելի մարմիններ, որոնք սովորաբար կոչին տարերք, յորոց շեմք կարող հանել ուղիւ մարմիններ որոնք տարբեր բնութիւն ունենան:

Այս տարբերը կը դասաւորուին ըստ իրենց ֆիզիքական և քիմիական յատկութեանց՝ զանազան խըմբերու. և իւրաքանչիւր տարրը կը նշանակուի իրեն յատուկ նշանացոյցով որ է իւր անուան առաջին տառն:

Անմետաղական մարմնոց մէջ, յորոց ումանք կազային են, մին գեղանիւթ, այլք հաստատուն, կրնամք յիշել նախ ջրածինը (Hydrogenium), որ պարզ մարմնոց մէջ՝ ամենէն թեթևն է, ասոր համար իւր հիշեական կշիռը¹ poids atomique de l'atome de hydrogène est très faible et n'a pas de nom propre : Անմետաղական մարմնոց մէջ, յորոց ումանք կազային են, մին գեղանիւթ, այլք հաստատուն, կրնամք յիշել նախ ջրածինը (Hydrogenium), որ պարզ մարմնոց մէջ՝ ամենէն թեթևն է, ասոր համար իւր հիշեական կշիռը¹ poids atomique de l'atome de hydrogène est très faible et n'a pas de nom propre :

Սետաղային պարզ մարմինները (ի բաց առեալ սնդիկը) սովորական բարեխառնութեան մէջ՝ հաստատուն մարմիններ են, և մետաղային յատկութիւններէն՝ մը ունին՝ որով միւս պարզ մարմիններէն կ'որշուին. Մետաղայինք փայլուն են, չերմութեան և ելեկտրութեան քաջ հաղորդիչ:

Ահաւասիկ կ'անցնիմք յեշելու բոլոր պարզ մարմինները իրենց քիմիական նշանացոյցներով, հիշեական կշռով և այլն:

1. Հետևող էլեմենտների մասին պարզ կամ բաղադրեալ մարմնոց մը յամանիք կումունական բաղադրական մասում պատճեն:

ՊԱՐԶ ՄՈՐՄԻՆՔ

ՆՇԱՆ ԱՑՈՅՑՔ	Հ Ա Ց Կ Ա Կ Ա Ն Ե Խ Բ Ո Պ Ա Կ Ա Ն Ա Ն Ս Ո Ւ Ա Ն Ք	ՀԻՒԼԻ- Ա Կ Ա Ն Կ Ե Ւ Ո
Ան - Sn	Անագ - Etain	118
Ալ - Ag	Արծաթ - Argent	108
Ալբ - Mo	Ալբին - Molybdène	96
Բիս - Bi	Բիսմութ - Bismuth	210
Բն - C	Բնածովն - Carbone	12
Բո - Az, N	Բորակածին - Azote, Nitrogène	14
Գա - Ga	Գալլին - Gallium	69,8
Գլ - Si	Գալիլազածին - Silicium	28
Դի - Di	Դիդիմ - Didyme	93
Եր - Er	Երբէ - Erbium	112,6
Եր - Fe	Երկաթ - Fer	56
Ջ - As	Ջառիկ - Arsénic	75
Ջն - Zn	Ջնկ - Zinc	65,1
Թթ - Tl	Թալլիոն - Thallium	204
Թթ - O	Թթուածին - Oxigène	16
Թո - Th	Թորիոն - Thorium	251,4
Թթ - Br	Թթրին - Brome	80
Ժրէ - Zr	Ժրէոնիոն - Zirconium	89,5
Ին - In	Ինդիոն - Indium	115,4
Իր - Ir	Իրիու - Iridium	197,2
Իտե - Yb?	Իտերբ - Ytterbium	175
Իտր - J	Իտրոն - Yttrium	89,6
Լա - La	Լանթան - Lanthane	92,8
Լիթ - Li	Լիթոն - Lithium	7
Լի - Ph	Լուսածին - Phosphore	34
Լու - Pt	Լուսուկի - Platine	194,5
Օմ - Sb	Օմարիկ - Antimoine	121
Օմ - S	Օմասմիք - Soufre	52
Օմ - Fl	Օմօրին - Fluor	19
Լիդ - Cd	Լիդրմոն - Cadmium	112
Լի - K	Լիալիոն - Kalium	59,1
Լի - Pb	Լիազար - Plomb	207
Լի - Cs	Լիսոն - Cæsium	155
Լի - Ba	Լիսուն - Barium	157
Լի - Co	Լիոբալտ - Cobalt	58,7
Լի - Ta	Լիոլոմբ - Columbium, Tantale	182,5
Լի - Ca	Լիոծին - Calcium	40
Մագն - Mn	Մագնիս - Manganèse	55,1
Մագն - Mg	Մագնից - Magnésium	14
Ման - I	Մանիդ - Iode	127

ՊԱՐԶ ՄՈՐՄԻՆՔ

ՆՇԱՆ ԱՑՈՅՑՔ	Հ Ա Ց Կ Ա Կ Ա Ն Ե Խ Բ Ո Պ Ա Կ Ա Ն Ա Ն Ս Ո Ւ Ա Ն Ք	ՀԻՒԼԻ- Ա Կ Ա Ն Կ Ե Ւ Ո
Նա - Na	Նասոր - Sodium	23
Նե - Np	Նեպտոն - Neptunium	148,2
Ներ - Nb	Ներբէ - Niobium	94
Նիկ - Ni	Նիկէլ - Nickel	58,7
Նո - Ng	Նորվուէգ - Norvegium	145,9?
Ու - Bo	Ուկերու - Bore	11
Ու - Au	Ուկի - Aurum	197
Ում - Os	Ումի - Osmium	199
Ու - U	Ուրանու - Uranium	148,8
Պլ - Pd	Պալազիոն - Palladium	106,48
Պլ - Al	Պալեղածին - Aluminium	24,4
Պլ - Cu	Պղինձ - Cuivre	65,5
Ջ - H	Ջրածին - Hydrogène	1
Ջր - Rb	Ջուքիկ - Rubidium	85,4
Ջ. - Ru	Ջութեն - Ruthénium	104
Սե - Se	Սելենիոն - Séléinium	79,5
Ս - Hg	Սերիկ - Mercure	200
Սո - Sr	Սորտոն - Strontium	87,5
Վան - Vd	Վանան - Vanadium	51,5
Վար - R	Վարդուն - Rhodium	104,4
Վար - W, Tu	Վուլֆրամ - Wolfram, Tungstène	184
Տե - Te	Տելլուր - Tellure	128
Տեր - Tb	Տերբէ - Terbium	148,5
Տի - Ti	Տիտան - Titane	50
Գլ - Gl	Գլուցին - Glucinum	9,5
Գլ - Cl	Գլուռ - Chlore	55,5
Գր - Cr	Գրում - Chrome	52,4

Այս պարզ մարմիններէն մի քանիք իրարու հետ
միանալով՝ բաղադրեալ մարմիններ յառաջ կու զան:
Օրինակի համար ըլոր չլոր chlore և նատրիում sodium
ըլորու հետ միանալով կը կազմի Ալումակ sel gemme:

Նշանացոյցք

Մեր լիշեալ հանքարանական բառերուն առջև դրած
գլխագորեն կը ցուցը նեն նոյն հանքերուն մէջ գտնուած

պարզ մարմինները, զոր օրինակ բորակի (§Ես 4) առջև կը թթ. տառերն կ'իմացընեն թէ բորակի մէջ կան կալիոն - բորակածին - թթուածին (բորակական թթուուտ) պարզ մարմինները, կամ թէ ըսել բորակը կը բաղկանայ կայինեն և բորակական բրուռուտ:

Երբ բաղադրեալ մարմնոյ մը մասնեկին մէջ կը մտնեն պարզ մարմնոյ մի երկու կամ աւելի հիւլէներ, նոյն մարմնոյն նշանացոյցին առջևը նշան մը կը դրուի որ կը ցուցընէ հիւլէներուն թիւը: Օրինակի համար. մասնիկ մը ջուրը բաղկացած է երկու հիւլէ ջրածնէ և մի հիւլէ թթուածնէ, և ասոր համար իւր նշանացոյցը կը զրուի Զ₂ Թ. որ է մասնիկ մը ջուր:

Ցիշենք հոս ուրիշ օրինակներ ալ. ժերմբացրածնական բրուռուտի աcidε sulfhydrique նշանացոյցն է, Զ₂ Ծ Թ. որ կը նշանակէ թէ իւր մասնիկը կը բովանդակէ երկու հիւլէ ջրածնին և մի հիւլէ ծծումք:

Դնելով Զ₂ Ծ զընկի հետ, այս մետաղը թթուուտէն կը վանէ զլրածին և կը բաղադրի ծծումքի հետ աղ մը կազմելով, որ է ժերմբուշ զլենկոյ sulfure de zinc, և ասոր նշանացոյցն է Զ₂ Ծ:

Նշանացոյցն Զ₂ Ծ Թ₄ ժերմբական բրուռուտ կը նշանակէ և կը Ծ Թ₄ ժերմբատ կրածնի, որ է ըսել բաղադրութիւն ծծըմբական թթուուտի՝ կրածնի հետ: Վերջապէս նշանացոյցն կը Ծ Թ₄ + 2 Զ₂ Թ. է ծծըմբատ ջրատ կրածնի, և կամ 2 մասնիկ ջուր առ իւրաքանչիւր մասնիկ ծծումքի:

Շատ անգամ հանքաբանական նշանացոյցներու մէջ թթուածնի նշանացոյցը կը նշանակուի դնելով կէտ մը պարզ մարմնոյն վրայ՝ որուն հետ բաղադրեալ է. օրինակի համար, Ե₂ Թ₃ կը դրուի Ե₂:

Ասոնց վրայ աւելորդ կը համարինք երկարօրէն հոս խօսելու քանի որ տարրաբանութեան կամ քիմիայի կը վերաբերի ասոնց ուսումը:

ՃԹ. ՄԱՍՆ

ՃԹ. Հանքերու Դասերն

Հանքերու գիտութիւնը գիւրացընելու համար, բոլոր հանքերը կը բաժնեն Հինգ դասերու. Ա. - 0Դ և յուր. Բ. - Սզք. Գ. - Քարինք և հողք. Դ. - Մտաղը և անոնց հանածոյք. Ե. - Դիւրավալու հանք:

Ա. 0Դն և յուր իրբե հոսանուտ մարմինք բոլոր մեր երկրագունուր կը չըլապատեն. օդը իբրև առածքական մարմին մը բոլոր երկիրս չըլապատելէն վերջը՝ նաև ամենայն գատարկութեանց և մարմնոց ծակտիքներուն մէջ մտած է, իսկ ջուրը երեք վիճակաւ կը գտնուի կազմային, հեղուկ և հաստատուն:

Բ. Սզք քիչ խտութիւն ունին, լուծական են ի ջուր, մետաղկերպ տեսք մը չունին, և յատուկ համ մը ունին:

Քարինք և հողք հաստատուն հանքեր են, դիւրաց ջրոյ մէջ չեն լուծուիր, մետաղեայ տեսք մը չունին, (ընդհանրապէս) քիչ է խտութիւննին: Ոմենակարծր նիւթեր կը պարունակեն:

Բաղմաթիւը կենդանի գոյներ կ'ունենան, և շատերուն փոշին անգոյն կ'ըլլայ, ասոնցմէ ոմանք երբեմն ալ շատ թափանցիկ կ'ըլլան:

Կը բաժնուին հետևեալ դասերու:

Գ. Կրաքարինք

Դ. Կշռունիկը

Ե. Դահմանակը

Զ. Ճարպաքարինք

Լ. Թիթղոնք

Ը. Հողք

ա). Կաւայիմ հողք

բ). Գութաւորիչ հողք

գ). Մաքրելու հողք

Թ. Խստաքարինք

ա). Արասոյ վէմք

բ). Երկլիմաքարիմք

գ). Գաւայրզք

դ). Պատուական ակումք

Մետաղը և Մետաղեայ համք են (ի բաց առեալ սնդիկն որ հեղուկ է) հաստատուն մարմինք, դժուարալոյծ ի ջուր, գրեթէ միշտ մետաղեայ տեսք մը ունին, անթափանց են և մետաղեայ փայլունութիւն ունին։ Հանքը ինչ գոյն որ ունի՝ նմանապէս իւր փոշին նոյնը կ'ունենայ։ Այս դասը կը պարունակէ տեղուրեան նիւթեր։ այսինքն։

Ժ. Թթվուուկը,

ԺԱ. Ինքնաբոյս մետաղը

ա). Ազմիւ մետաղը

բ). Տարածական և հասարակ մետաղը

գ). Հասարակ և դիւրաբնկ մետաղը

ԺԲ. Հրաքարինք

ԺԳ. Գալէնեայք

ԺԴ. Փայլուկը

Դիւրավառ համքերը կ'ըլլան կամ հեղուկ իրենց յատուկ հոտովիւ, կամ հաստատուն անոյծ իջուր, և աւելի անմետաղականք են, կարծրութիւննին և խոռութիւննին շատ նուազ է։

Ասոնք կը համարուին։

Ա. Դիւրավառ բիւրեղացեալ հանքեր,

ԺԵ. Ծծումբք.

Բ. Անդիւրեղացեալ դիւրավառ հանքեր,

ԺԶ. Ածուլիք.

ԺԷ. Ռէտինք.

ա). Մետաղյին փայլումութեամբ

բ). Առանց մետաղական փայլի։

ՀԱՆՔԵՐՈՒ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

ԸՍՏ ԻՐԵՆՑ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Ա. Ինքնաբոյս տարերք։

Ա. Մետաղակերպք (Ագամանդ, Գրչաքար, Ծծումբք)։

Բ. Մետաղք։

1. Տարանկիւնանիստք, թիթղաբաժանելի, դիւրաբնկ մետաղք (Զառիկ, Ծարիր, Բիւմուտ, Զինկ)։

2. Երկաչափականք (Անագ)։

3. Միաչափականք, անթիթղաբաժանելի և կռանակար։

ա) Հասարակք (Երկաթ, Պղինձ, Կապար),
բ) Աղնիկք (Անդիկ, Արծաթ, Ոսկի, Լուսունկ)։

Բ. Բաղադրութիւնք մետաղաց Ք, Ե, և այլն պարզ տարերաց խումբին հետ։

Ա. Քլոունկք (Ազուճակ, Անուշադր),

Բ. Ծորնունկք (Ծորին)։

Գ. Բաղադրութիւնք մետաղաց Ծ, Զ, Ծա տարերաց հետ։

Ա. Զառկունկք (Առւտ պղինձ, Խաժըլուտաքար),

Բ. Ծծըմբունկք։

Վ. Պարզք։

ա) Բաղադրեակք ըստ նշանացոյցի Մե₂ Ծ (Արծաթ, թաքար, Աղմակ, կապղինձ),

բ) « « « « « Մե₂ Ծ (Գալէն, Կինաբարիս, Փայլուկք, Զնարակ հանքային),

շ) « « « « « Մե₇ Ծ₃ (Վերաթթուուկ մագնանի,

- դ) Բաղադրեալք ըստ նշանացոյցի Մե₂ Փ₃ (Ոսկե-
գառիկ, Մար-
բաքար),
- ե) « « « « « Մե₂ Փ₂ (Ոօշ-
նս) :
2. Կրկնակք (Ոօշնա պղընձային).
3. Ծծըմբազառկուկք և ծծըմբաժարբուկք (Ոօշ-
նա զառկեղին, Վարդարծաթ, Գորչ պղինձ):
- Դ. Թթուռուկք:
- Ա. Անջուրք:
1. Պարզ:
- ա) Բաղադրեալք ըստ նշանացոյցի Մե₂ Թ₃ (Պղըն-
ձահանք),
- բ) « « « « « Մե₂ Թ₃ (Բարմար-
ցանկ),
- գ) « « « « « Մե₂ Թ₃ (Կորին-
դոն, Արինա-
քար),
- դ) « « « « « Մե₂ Թ₂ (Գա-
ւարդ, Անագա-
քար, Վերաթը-
թուռկ մագնա-
նի):
2. Կրկնակք:
- ա) Բաղադրեալք ըստ նշանացոյցի Մե₂ Թ₃ (Մե₂
Թ₃ (Փշակն, Մագնիտաքար, Քրոմաքար):
- բ). Ջրատեալք (Ոսկեբորական թթուռուտ, Ար-
կաքար, Արկակ):
- Ե. Թթուռածնաղ.
- Ա. Վոլիբամատք (Շէէլիտ):
- Բ. Արճինատք (Ուլֆենիտ):
- Գ. Լուսածնատք:
1. Անջուրք (Խաբուսիկ քար, Հբաքար):
2. Ջրատեալք (Պերոպակն):
- Դ. Ոսկեբորատք:

1. Անջուրք (Ոսկեբորաքար):
2. Ջրատեալք (Ոսկեբորակ):
- Ե. Ծծըմբատք:
1. Անջուրք (Կոռունաքար, Գորշաքար):
2. Ջրատեալք (Գաճ, Արջասպ կանաչ, Կապոյտ
արջասպ, Սպիտակ արջասպ, Անդղիական աղ,
Գլաւրեր աղ, Պաղեղ):
- Զ. Բորակատք (Բորակ, Մարիանիտ):
- Է. Բնածխատք:
1. Անջուրք:
- ա) Տարանկիւնանիստք (Կրաքար, Գոլոմի, Եր-
կաթաքար, Բնածխատ զընկոյ,
- բ) Եռաչափականք (Արագոնեան քար, Բնածխատ
կապարոյ):
2. Ջրատեալք (Խատրոն, Խաժաքար, Գահա-
նակ):
- Ը. Գայլխազատք:
1. Անջուրք:
- ա) Երկգայլխազատք (Երկդիմաքար, Հբանտ,
Կտաւաքար, Զմոնւխտ):
- բ) Միագայլխազատք (Ործաքար, Զիթակն, Ժար-
գոն, Թիթղոն, Լազուարթ, Լանաքար, Հսաս-
րակ արաստոյ վէմ, Լաբրատորաքար):
- դ) Ենթագայլխազատք (Տպաղիոն, Վանաքար):
2. Ջրատեալք (Թութիաքար, Ոսկեդահանակ,
Տալզոն, Փրիբաքար, Օձաքար, Քաղին, Կաւ,
Կանաչ քար, Կեղատոնիտ, Մելինիտ):
- Զ. Ուետինք և Բրածոյ կիզանուտք (Սաթ, Քարիւղ,
Կուպր, Կայ, Ածխաքար, Հանքածուխ, Փայ-
տաքար, Հողածուխ):



Ի. ՄԱՍՆ

Ա.Ն Ո Ւ Ա.Ն ԱԿ Ո Չ Ո Ւ ԹԻ ԻՆ

ԿԱՄ

ԲԻՒՐԵԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1). Հանքերը բացատրելու համար, պէտք ենք ուսանիլ . ա) անոնց արտաքին ծերն . բ) բնարանական յատկութիւնն, որոնց երեսոյթք ամեննեին իրենց բնութիւնը չեն խանգարեր . գ) տարրաբանական յատկութիւնը, որոնք կ'երեւին մեղ՝ երբ քիմիական փորձերով այլայլի իրենց բնութիւնն:

ՀԱՆՔԵՐՈՒԻ ԱՐՏԱՓԻՆ ԶԵՒԻՆ.

2). Հանք, սովորական բարեխառնութեամբ, մեծաւ մասամբ հաստատուն են, քիչերն հեղանիւթք (Սնդիկ, Քարիւղ, Ջուր), կամ կազային (Մթնոլորտային օդ, Ջրեղէն գոլորշի):

3). Հաստատուն հանք կ'ըլլան բիւրեղացեալ . պատկերիչ ձևեր կ'ունենան, այսինքն ուրիշ գործարանաւոր և անգործարանաւոր մարմոց ձևերն կ'առնուն. կամ բոլորովին տծեւ կ'ըլլան, անկախ իրենց բնութենէն :

4). Բիւրեղը անգործարանաւոր մարմիններ են, հաստատուն և համասեռ, ունին բազմանիստ ձև՝ որ իրենց սեփական է : Բիւրեղացումը կատարի՝ երբ նիւթոց մասնկունք ազատ շարժմամբ հաստատուն վիճակի կը փոխարիկին : Այսպէս օրինակի համար քոռուկ նատրի լուծենք ջրոյ մէջ և թողունք որ կամաց կամաց գոլորշանայ լուծմունքը, աղը խորանարդածե կ'ինչ անօթին յատակը :

Բիւրեղը կը համարուին կենդանի արարածք հանքաբանութեան մէջ : Ջունին որոշեալ տարածոց մը . կրնայ ըլլալ որ միւնոյն բիւրեղը ամենամանր կամ լսոշոր ըլլայ :

Ընդհանրապէս բիւրեղը կը գտնուին ի բնութեան կամ առանձնացած (լուծեալ) աւագներու և ժայռերու ծակտեաց կամ ցանուցիր հոծ ժայռերու մէջ : Երբ շատ մը բիւրեղը մէկ կեղրոնի մը մէջ ամփոփուած ըլլան և հաստատապէս իրարու հետ միացած ըլլան, կը կազմեն խումբ մը : Շատ մը բիւրեղներ ալ ծածկուած կ'ըլլան երկրաքարի ցնօք ժակտեաց մէջ :

5). Բիւրեղը կազմին մակարդակներէ plans (եռանկիւնի, քառանկիւնի, հնգանկիւնի, վեցանկիւնի, և այլն, և այլն), որոնք զիրար շօշափելով կը ձևացընեն արտաքին անկիւնք (կողագծեր), կամ գծեր ուր կը պատահին երկու երեք մակարդակներ . և նմանապէս հաստատուն անկիւնք, կամ կէտք՝ յորս կը զուգընթանան երեք կամ շատ մակարդակներ :

6). Բիւրեղաց գիտութեան մէջ էական գիտնալու մաս մի ալ՝ իրենց առանցքներն են . բիւրեղի առանցքը ըսելով կը հասկընեմք այն երեւակայեալ ուղիղ գծերն որ կը ձգուին բիւրեղաց կեղրոնը . և այս գծերուն չորս կողմը կը գտնուին բիւրեղաց երեսները :

Առանցքներէն մին միշտ գագաթնահայեաց դիւք կ'ենթադրուի և նոյն առանցքը կոչի գլաւոր առանցք, (Ձև 82 ԳԳ), այլք Բ. Ա. Ա. կոչին երկրորդական ասանցք :


Առանցքները կը ձգուին թէ բիւրեղներուն երեսաց կեղրոնէն և թէ կողագծերուն մէջտեղերէն, և այլն : Ըլլայ, զոր օրինակ, խորանարդ բիւրեղ մը, ասոր զուգահետական երեսները իրենց կեղրոնէն երկերկու իրարու միացընելով՝ կ'ունենայ երեք առանցք . իսկ եթէ կողագծերն երկերկու իրարու հետ միացընենք կ'ունենայ վեց առանցք :

Հանքաբանք բովանդակ հանքերը վեց դրութեանց կամ տիպարներու կը բաժնեն, յորոց իրաքանչիւրն յատուկ և կայուն համաշափութիւն մը ունին :

7) Այս 6 բիւրեղեայ տիպարներն կամ դրութիւնք են:

Ա. Տիպար Միաչափական . ունի 3 հաւասար իրարու ուղղահայեաց perpendicularaire առանցքներ . և սոյն տիպարի եական մնան է կանոնաւոր ութանիստը, յորում առանցքները ընդդիմահայեաց անկիւններուն գագաթները իրարու կը կցեն (Ձև 78) :


Բ. Երկաչափական . այս ձևին մէջ կը դիտեմք 3 առանցք . յորոց երկուքն իրարու հաւասար են մին անհաւասար (ԱԱ, Զկ 79), իրարու ուղղահայեաց են :



Զկ 78.

Զկ 79.

Գ. Տարանկիւնանիստ տիպարն կ'ունենայ 4 առանցք . ասոնցմէ երեքն հաւասար են և հաւասարակէս խոնարհած են 60 աստիճանաւ . չորրորդ առանցքը անհաւասար է և ուղղահայեաց այն մակարդակին՝ ուր կը գտնուին յիշեալ երեք առանցքները . (Զկ 80, 81) են տարանկիւնանիստ ձևեր :



Զկ 80.

Զկ 81.


Դ. Եռաչափական տիպարին մէջ կան 3 առանցք . անհաւասար են և իրարու ուղղահայեաց (Զկ 82 ԱԱ, ԲԲ, ԳԳ) :

Ե. Մրանիստ տիպարն միամակարդակ զուգաչափութեամբ է (ՕԵՕԵ, Զկ 83) : Ունի անհաւասար 3 առանցք , երկուքը իրարու ուղղահայեացը են , մին շեղ :


Զ. Եռանիստ տիպար յորում ամենելին չի գտնուիր որևէ զուգաչափ մակարդակ մը (84) : Ասոր 3 առանցքներն ալ իրարու անհաւասար և շեղ են :

Ց). Միաչափական տիպարին կը պատկանին յաջորդ գլուխաւոր ձևերն :

Ռ). Պարզ հանրանիստք են :




Զկ 82.




Զկ 83.

Ա. Խորանարդ կամ վեցանիստ (Զկ 85) ունի վեց քառակուսի մակարդակներ , որք իրարու հանգիպելով , կը կազմեն 12 արտաքին անկիւնք և 8 գիպելով :



Զկ 84.




Զկ 85.


Հաւասար հաստատուն անկիւնք , յորում կը գտնուին 3 երեսք : Խորանարդակ հանքերն են Աղուճակ , Գալէն , Ծորնաքար , Արծաթ , Ոսկի , Ոօշնա , և այլն : Բ. Ութանիստ՝ կ'ըլլայ հաւասարակող 8 անկիւնք , այս ձևը կը տեսնուի ընդհանրապէս Պաղեղի , Ծորնաքարի , Աղամանդի , և այլն , վրայ (Զկ 86) :

Գ. Տարանկիւնի երկոտասամիստ (Ձև 87), ունի հաստատուն 12 տարանկիւնի հաւասար երեսներ։ Այս ձեւը յատուկ է Որձաքարի և Բլէնդի։

Դ. Տրապիզանիստ (Ձև 88), կունենայ 24 քառանկիւնք զուգաչափ, 2 տեսակ կողերով։ Որձաքարի յատուկ ձևն է։




Ձև 86.




Ձև 87.

Ե. Եռութանիստ (Ձև 89) ունի 24 հաւասարասրուն եռանկիւնք. զայս կրնամք ենթադրել իբրև Ութանիստ մը, որ իւրաքանչիւր երեսաց վրայ ունի 3 հաւասարակող տափկած բուրգ մը։ Այս ձեւը յատուկ է Գալէնի։



Ձև 88.




Ձև 89.

Զ. Քառավեցանիստ (Ձև 90) սա 24 հաւասարակող եռանկիւններ ունենալիքն զատ՝ ունի ևս խորանարդի ձև մը, որուն իւրաքանչիւր երեսաց վրայ կայ բուրգ մը որուն չորս կողերն հաւասար են։ Այս ձեւը կ'երեւի Ծորնաքարի վրայ։


Է. Վեցութանիստ (Ձև 91) ունի 48 անհաւասարակող եռանկիւնք. յատուկ է այս ձեւը Աղամանդի, և այլն։

Յ. Պարզ կիսանիստ ձեւ (ասոնց մէջ պարզ հանրանիստ ձեւերու երեսաց կէսն կը գտնուի)։

Ֆ. Քառանիստ (Ձև 92) ունի հաւասարակող 4 եռանկիւնք, յառաջ գայ Ութանըստէն, ջնջելով ասոր 4 փոխադիր երեսները, և միւս մնացածներն լայնցընելով մինչև որ իրարու պատահին։ Այս ձեւը ունի Բլէնդ և Եռանըստաքար (աստի անունն առած է)։




Ձև 90.




Ձև 91.

Թ. Հնգանկիւնի երկոտասանիստ (Ձև 93), ունի 12 հնգանկիւն զուգաչափ (4 կողք հաւասարք և 1 անհաւասար), յառաջ գայ Քառավեցանըստէն, լայն-



Ձև 92.



Ձև 93.


յընելով ասոր 12 փոխադիր երեսք մինչև որ միւսք անհետանան։ Յատուկ է Ուշնայի և Կորալտի։

Չ.). Բաղադրութիւն։


Փ. Խորանարդ (Զւ. 94, Գ), ասոր 8 անկիւնները հատեալ են զուգաչափութեամբ հաւասարակող (0) եռանկիւններէն։ Լայնցընելով 8 (0) երեսք մինչեւ իրար պատահին, կը ստացուի կատարեալ Ութանիստ մը. ընդհակառակին երկնցընելով 6 երեսքն (Գ) այնպէս որ աներեւութանան մինչեւ խակ (0) երեսները, կը ստացուի կատարեալ Խորանարդ մը։ Աստի է որ ձեն (Զւ. 94) կոչի Խորանարդ առևթանիստ կամ բաղադրութիւն Խորանարդի և Ութանըստի հետ։

Յատուկ է այս ձեւը Սզուճակի, Գալէնի և այլն. սա արուեստիւ ևս կը պատրաստուի Ծորնաքարի վրայ։

ԺԱ. Ութանիստ (Զւ. 95), որուն անկիւնք և սն-



Զւ. 94.



Զւ. 95.


կիւնագիծք հատեալ են (Գ) և (Դ) երեսներէն։ Լայնցընելով (Գ) երեսներն, կ'ունենամք Խորանարդ մը. խակ 8 (0) երեսներն տարածելով՝ կ'ունենամք Ութանիստ մը. սոյն եղանակն վերջապէս բանեցընելով նաև 12 (Դ) երեսաց վրայ՝ կ'ունենամք մի Տարանկիւնի երկուտասանիստ։ 95 ձեւն կրնայ ըսուիլ բաղադրութիւն մը Ութանըստի ընդ Խորանարդի և Տարանկիւն երկուտասանստի։ Այս ձեւն յատուկ է Գալէնի, Պաղեղի և ուրիշ հանգերու։

ԺԲ. Քառանիստ (Զւ. 96, 0) յորում հաստատուն անկիւնք հատեալ են հաւասարակող եռանկիւնի (0) երեսներէն։ Այս ձեւը շատ անզամ Բլէնդի վրայ կ'երեւ։


9). Երկաչափական տիպարին կարեւոր ձեւերն են։

Ա. Բուրգքառակուսի հատուածով (Զւ. 97), ունի 8 հաւասարասրուն isosceles հաւասար եռանկիւններ։ Բոլոր հորիզոնական հատուածք քառակուսի են։ Շէշմատի վրայ կ'երեւ այս ձեւ։

Բ. Ուղիղ հատուածակողմ քառակուսի խարըսիս (Զւ. 98), կողմնակի ունի 4 հաւասար գագաթ-




Զւ. 96.




Զւ. 97.

նահայեաց (Ա) երեսք, և երկու ծայրք կը վերջանան հորիզոնական (Ե) մակարդակներով։ Իւրաքանչիւր հորիզոնական հատուածն կու տայ նաև քառակուսի մը։

Գ. Նոյն Հատուածակողմը քառակուսի հատուածով



Զւ. 98.



Զւ. 99.


(Ա), երկու ծայրերն կը վերջանան (Ր) երեսներով որք կը պատկանին Քառակուսի հատուածով ըբգի չամքաբ նրեմեան

մը երեսաց (Զւ 99): Այս ձեզ շատ կը տեսնուի Անագագարի վրայ:


Դ. Միենոյն Հատուածակողմն քառակուսի խարսխաւ (ա, թ) Քառակուսի հատուած բրդի մը (թ) երեսներուն հորիզոնական կողագծից վրայ: Կը տեսնուի այս ձեզ Ուղենաքարի վրայ (Զւ 100):

10). Տարանկիւնանիստ դրութեան մէջ շատ անգամ կը տեսնուին հետևեալ ձերն:

Ա. Տարանկիւնանիստը կը վերջանայ 6 տարանկիւնի հաւասար երեսներէ, որոնք յառաջ կը բերեն 12 արտաքին անկիւնք, յորոց 6 կողմանակնք են և օձաձև դրիւք, մինչդեռ այլք՝ կ'ընթանան երեք երեք վերին և ստորին ծայրերն: Կան երկու տեսակ հաստատուն անկիւնք. 6 կողմանակնք՝ իրարու հաւասար են, ինչպէս են նաև անկիւնն վերին և ստորին: Կ'որոշուին սուր և բութ Տարանկիւնանիստք ըստ որում արտաքին անկիւնք բութ կամ սուր կ'ըլլան, կամ




Զւ 100.




Զւ 101.

կը ներկայացընեն 90° փոքր կամ մեծ երկանիստ անկիւններ (Զւ 101, 102 և 103):



Զւ 102.




Զւ 103.


Այս յատուկ ձեն կը տեսնուի շատ անգամ կրաքարի, Երկաթաքարի վրայ:

Բ. Երկրգածեւ հաւասար – վեցանկիւնի (Զւ 104) ձեացած է 12 հաւասարասրուն եռանկիւններով, իւրաքանչիւր հորիզոնաձև հատուած կուտայ կանոնաւոր վեցանկիւն: մը: Կը տեսնուի սա Գաւարգի վրայ:

Գ. Անզուգակողմնիստ (Զւ 105), կը վերջանայ 12 անհաւասարակող եռանկիւններէ որք կը կազմէն 3 տեսակ արտաքին անկիւնք. իրարու հաւասար վեցարտաքին անկիւնք օձաձև դրիւք են, ինչպէս Տարան-



Զւ 104.




Զւ 105.

կիւնանըստի մէջ կը տեսնուի. վերին և ստորին ծայրք ունին 6 արտաքին անկիւնք, երեք երեք հաւասար



Զւ 106.



Զւ 107.

և իրարու փոխադիր: Այս ձեզ շատ կը տեսնուի կրաքարի վրայ:


Դ. Հատուածակողմ ուղիւլ-վեցանկիւնի (Զւ 106)

կը ձեւանայ 6 գագաթնահայեաց և հաւասար (Ա) եռեսներով կը վերջանայ երկու հորիզոնաձև (Ե) խարիսխներով : Իւրաքանչիւր հորիզոնաձև հատուած կուտայ ուղիղ կամ կանոնաւոր վեցանկիւն մը : Սակայ կը տեսնուի սոյն ձևն կրաքարի, Զմրուխտի և Խարուսիկ քարի վրայ :


Ե. Միենոյն Հատուածակողմն (Ա), խարսխաւ (Ե), (Ձկ 107), բայց հորիզոնաձև կողագծերով՝ որք հատեալ են Երկբրգածեւ վեցանկիւնւոյ (Ր) երեսներէն :

Այս ձևը կը տեսնուի Խստաքարի, Զմրուխտի և Հրաքարի վրայ :

Զ. Միենոյն Հատուածակողմն (Ձկ 108 Ա) որ Երկբրգածեւ վեցանկիւնիով (Ր) կը վերջանայ: Գաւարզի սովորական ձևն է :




Ձկ 108.




Ձկ 109.

Է. Միենոյն Հատուածակողմն (Ձկ 109, Ա) խա-



Ձկ 110.



Ձկ 111.


բըսխաւ (Բ), բայց շատ տափկած է ինչպէս կը տեսնուի կրաքարի և Թիթղոնաձև դրչաքարի վրայ :

Բ. Միենոյն Հատուածակողմն (Ձկ 110, Ա) որ ունի Տարանկիւնանը մը (Ր) երեսները. այս ձևն ալ կը տեսնուի Հրաքարի վրայ :


Շ. Երաշափական Տիպարին պատկանող ձևերն են :

Ա. Ուղիղ բրգածեւ տարանկիւնի հատուածով (Ձկ 111) ունի 8 անհաւասարակող հաւասար եռանկիւնք : Այս ձևը շատ մը հանգերու վրայ կ'երևի, ինչպէս Ծծըբոյ, և այն :

Բ. Ուղիղ հատուածակողմ տարանկիւնի խարսխաւ (Ձկ 112) որ ունի զուգահեռական 4 (Ա) երեսներ,




Ձկ 112.




Ձկ 113.

և իւր երկու ծայրերն կը վերջանան հորիզոնական տարանկիւնի (Պ) խարսխաւ :



Ձկ 114.



Ձկ 115.

Գ. Հորիզոնածեւ հատուածակողմ (Ձկ 113). Հոր երես ունի (Օ) ուղղեալ աշխն ձախ, ծայրերը կը դտնուին

երկու գագաթնահայեաց կողմակի և զուգահեռական
(Դ) մակարդակներ տարանկիւնի ձեռվլ:

Դ. Հորիզոնական հատուածակողմ (Ձև 114) չորս
(Բ) երեսներով, ուղղեալ դէպի ի գիտողն, և կը վեր-
ջանան երկու ծայրերն տարանկիւնաձև, գագաթնա-
հայեաց մակարդակներով (Դ):


Ե. Ուղիղըուրգն տարանկիւնի հատուածով, որուն
ծայրերը հորիզոնաձև հատեալ են (Ձև 115): Այս
ձևը կը գտնուի Ծմբոյ մէջ:

Զ. Ուղիղ հատուածակողմ տարանկիւնի խարսխաւ
(Ա և Բ), երկու (Դ) երեսներով, որ կը հատանեն հա-
տուածակողմեան գագաթնահայեաց արտաքին սուր
անկիւնները (Ձև. 116): Կը տեսնուի Արագոնեան
քարի վրայ:

Է. Ուղիղ հատուածակողմ տարանկիւնի հատուա-
ծով (Ա) ընդ թրգածեւ տարանկիւնի հատածով (Բ)
և երկու (Դ) մակարդակներով որք կը հատանեն հա-
տուածակողմեան (Ձև 117) առաջակողմեան և յե-



Ձև 116.



Ձև 117.

ատակողմեան արտաքին գագաթնահայեաց անկիւննե-
րը: Ծարրաքարի յատուկ ձեն է:

Ը. Ուղիղ հատուածակողմ տարանկիւնի խարս-
խաւ (Ա և Բ) երեսներով (Օ), որք կը վերաբերին Հո-
րիզոնական հատուածակողմի մը ուղղեալ յաջէն
ձախ (Ձև 118): Կշռունաքարի յատուկ ձեն է:

Թ. Ուղիղ հատուածակողմ տարանկիւնի հատուա-

ծով (Ա) երկու (Գ) երեսներով յաջ և ձախ, և Հո-
րիզոնական հատուածակողմի (Բ) ուղղեալ դէպի ի
դիտողն: Այս ձեն կը գտնուի Ոսկեբորակի, Արագո-
նեան քարի, և ուրիշ շատ մը հանգերու վրայ (Ձև 119):

Փ. Ուղիղ հատուածակողմ տարանկիւնի (Ա և Բ)
շատ տափկած խարսխաւ և երկու կողմակի երես-
ներով (Ձև 120 Գ): Թիթղոնի վրայ կ'երմի:


12). Մրանիստ Դրութեան կը վերաբերին յաջորդ
ձեւերն:

Ա. Խոտոր բուրգն տարան-
կիւնի խարսխաւ՝ ունի 8 անհա-
ւասարակող եռանկիւնք, չորս չորս
հաւասար (Ձև 121, Ա և Բ):

Բ. Խոտոր հատուածակողմ
տարանկիւնի խարսխաւ, ունի 4




Ձև 118.




Ձև 119.

հաւասար կողմակի երեսները (Ա), և հատեալ խոտոր-
նակի, վերին և ստորին երկու ծայրի (Բ) երեսներէն:



Ձև 120.




Ձև 121.

Կը տեսնուի այս ձևը Խաժաքարի վրայ (Ձև 122):


Գ. Խոտոր բրգածեւ տարանկիւնի հատուածով (Ա)

բաղադրեալ քառերես, մի Շեղ (Դ) հատուածակող մով, և երկու (Բ) երեսներով որք աջ և ձախ արտաքին անկիւնները կը կտրեն։ Գաճի յատուկ ձևն է (Ձև 123)։ Նման են ասոր նատրոնի բիւրեղը (Ձև 123), Երկդիմահանք (Ձև 124)։

Դ. Խոտոր հատուածակողմ տարանկիւնի հատածով (Ա) երկու զոյգ գագաթնահայեաց երեսներով (Բ և Գ) և վերջացեալ




Ձև 122.




Ձև 123.

քառերեսաւոր շեղ հատուածակողմով (Դ)։ Այս ձեւը յատուկ է Պայծառ հրանտի, Տրիպոլեայ (Ձև 125)։



Ձև 124.



Ձև 125.


Ե. Խոտոր հատուածակողմ տարանկիւնի հատուածով (Ա), ունի հորիզոնական հատուածակողմ քառերես, երկու երկու հաւասար (Ձև 126. Բ և Գ)։ Հատ անգամ սոյն ձևով կ'երեսի խարուսիկ քարն։

13). Երւանդստ Տոհմի ձեւերուն մէջ ամենէն նշանաւորքն են։


Ա. Խոտոր բրգածեւ տարանկիւնային խարսխաւ,

ունի 8 անհաւասարակող եռանկիւնք, երկու երկու իրարու զուգահեռական և հաւասար (Ձև 127)։

Բ. Խոտոր հատուածակողմ տարանկիւնային խարսխաւ, որ ունի 4 կողմնական երեսներ, երկու երկու ըլսխաւ,




Ձև 126.




Ձև 127.

հաւասար, և կը վերջանայ տարանկիւնային խարսխաւ շեղեալ կողմնակի երեսաց վրայ (Ձև 128)։

Գ. Խոտոր հատուածակողմ տարանկիւնային խարսխաւ (Ա, Բ, Գ) յորում կողմնակի արտաքին անկիւնք



Ձև 128.




Ձև 129.

հատեալ են (Դ, Ե, Զ) երեսներէն, և վերին, առաջա- կողմեան, աջակողմեան, նաև հակադիր կողմեան հաս- կարգմեան, կազմուած ձևն որուն մէջ մակարդակը մակարդակներէ կազմուած ձևն որուն մէջ մակարդակը կը տեսնուի Պղընձային Արջասպի վրայ (Ձև 129)։

ԻԱ. ՄԱՍՆ

Համբերու ձեւելին.

14). Շատ անգամ հանքերը տարօրինակ ձեւերով ծանօթ իրաց պատկերն կը զգենուն՝ որով Պատկերիչ կը կոչուին: Կան օրինակի համար շատ մը հանքեր, ինչպէս Արկաքար, Կրաքար որ բոլորովին զնդաձե կ'ըլլան, կամ այլը ինչպէս Կայծքար, որք գտանին յերիկամնաձե հանածոյս՝ յառաջ եկած են շատ մը զնդակաց իրարու հետ անկանոն կերպով միանալին: Երբ այսպիսի շատ մը զնդակներ իրարու կը կոչին, յառաջ կը բերեն ծծակաձե կերպարանին. շատ անգամ կը տեսնուի այս ձեւով Քաղկեդոնիկն և ուրիշ հանքեր որք կը կազմին ջրոյ լուծմանց մէջ մարմնոց դանդաղ



Ձև 130. - Յիմկալայի այրու:

Նստելին: Այս կերպով կը ձևանան քարայրներու մէջ Շթաքարինք և Պտկաքարինք, երբ ջուրը շիթ շիթ կը կաթկթի քարայրներու կողերէն անցնելով բնածխոյ գետնակներէն: Շթաքարով և պտկաքարով ձեւացեալ Փինկալայի այրը իւր ճարտարապետական տեսքովն

շատ նշանաւոր է (Ձև 130): Բազմաթիւ հանքեր և անքաւ ինքնարայս մետաղը (Ոսկի, Արծաթ, Պղինձ) կ'ըլլան շիւղաձե, թիթեղնաձե, ատամնաձե, ճիւղաւորեալ և այն:

15). Համախմբեալ հանքերն կը բաղկանան կտորներէ և կամ անկատար մասերէն՝ նման հատերու, գաւազաններու և նեարդերու, կամ թիթեղներու:

16). Հանքերու պատահար ծեւերէն կը յիշուին, Քարեղին դրուգներն՝ որք շատ անգամ կը կազմին հանքային աղբերաց մէջ. Տիպը զար կը թողաւն շատ անգամ գործարանաւոր մարմինք (տերեք, ցողունք ծագուց, խեցիք, ձկունք և այլն), երբ հանքը փափուկ վիճակի մէջ ըլլայ և սկսի թանձրանալ՝ այն ատեն հանոնց նշանները հանքին վրայ կը տպաւորին: Պատահանուն նշանները հանքին վրայ աղբաւորին: Այս հանքը ձևեր են նաև բրածոյք, կամ գործարանաւոր միացար ձևերն կը պահէն: Առաջ կերպարանական տարրաբաշխութեամբ կը ձևանան երբ տարրաբանական տարրաբաշխութեամբ բիւրեղացեալ հանք մը ուրիշ հանքի կը փոխարկի, բիւրեղացեալ հանք մը ուրիշ հանքի արտաքին ձևը: Այսպէս կը գտնեմք պահելով իւր արտաքին ձևը: Այսպէս կը գտնեմք Արկաթաքարին՝ Երկաթաքարի և Ոօշնայի ձեւով, Քառինը՝ Արաւարին՝ Վարաստոյ վիմի, Տալունը՝ Հրանտի: Եւ աս ոչ միայն տարրաբաշխութեամբ կը պատահէի՝ այլ նաև երբ օտար մարմին մը կուգայ բոլոր իրեն մասնիկներով կը լուսուրիշ մարմին մը առանց անոր արտաքին ձևն խանդակած գարելու:

17). Այն հանքերն որ բոլվանդակ լերան զանգուած մը կը կազմին, արտաքին հանոնաւոր կամ պատկերիչ մը շեն ունենար, կոչին Հոծ հանքեր: Երբ հանձեւ քերը ամենափռքը ըլլան և ներփակեալ ուրիշ հանքերու մէջ կոչին Ցամուցիր հանքեր:



ԻՐԱՍՆ

Հանքերու բնաբանական յատկութիւնք :

18). Հանքերու բնաբանական յատկութեանց ամենէն գլխաւորքն էն, Ա. Բաժանականութիւնն, Բ. Կարծրութիւնն, Գ. Խոտութիւնն, Դ. Գոյն. իսկ երկրորդական յատկութիւնք կը համարուին փայլունութիւն, թափանցկութիւն, երեկորականութիւն և մագնիտականութիւն. վերջապէս զգայական յատկութիւնքն, ինչպէս հոտ և համ :

19). Իւրաքանչիւր հանք, ինչպէս որ յայտնի է, բաժանական է, այսինքն կը փոխարկի ամենամանր մասերու հատմամբ, խորտակմամբ և այլն. բիւրեղները միայն թիթղաբաժանման յատկութիւնն ունին. այսինքն զանազան դրիւք կը բաժնուին այլ և այլ կանոնաւոր և փայլիլուն մակարդակաց : Թիթղաբաժանումն կամ հերձումն clivage ամենակարեռը է հանքաբանութեան ուսման . երբեմն պարզ սոյն յատկութեամբ կրնամք որոշել երկու հանք որ իրարու կը նմանին : Թիթղաբաժանեալ մակարդակաց թիւերն, անոնց կատարելութիւնն, անոնց դիրքն և այլն, շատ կարեոր են հանքերու դասաւորութեան : Թիթղոնք կը թիթղաբաժանին մէկ ուղղութեամբ բարակ, ճկուն, առածգական, մարգարտափայլ թիթղեղներու : Արատոյ վէմն ունի երկու թիթղաբաժանմունք անհաւասար կատարելութեամբ, որք զուգընթանան ուղիղ անկեամբ : Աղուճակն և Գալէն կը բաժնուին հաւասարապէս երեք իրարու ուղղահայեաց մակարդակաց, զուգահեռական Խորանարդի երեսաց . Կրաքարը կը թիթղաբաժանի հաւասարաշեղ երեք անուղղահայեաց մակարդակներու, որք զուգահեռական են Տարանկիւնանըստի մը երեսաց :

Ծորնաքարը կը հերձանի 4 դրիւք կամ թէ ըսել զուգահեռական ուղիղ Ութանըստի մը երեսաց . Բէնդը հերձական է 6 ուղղութեամբ՝ զուգահեռական Տարանկիւնի երկուասանըստի երեսաց :

20). Հանքի մը խորտակմանէն յառաջ եկած բեկորք, թիթղաբաժանմամբ ունեցած կանոնաւոր մակարդակներէն զատ, ունին նաև անկանոն երեսներ կամ ըեւկմուկք : Շատ անգամ այսպիսի մակերեւոյթք կոնքանման կը կազմին այն ատեն բեկորք կոչին կոնքանըստ, երբեմն խորտաբորտ կ'ըլլան (Կայժ.քար), կամ անհաւասար, հարթ, հողային (Կաւ), Ճամկածեւ (Երկաթ) : — Բեկումներու միջոցաւ համախմբեալ հանքերու ներքին կազմութիւնն կ'երեւի . ըստ համախմբեալ երակաց՝ կ'որոշուին կազմութիւնք հատածեւ, շաքարածեւ, գաւազանածեւ, նեարդածեւ, թիթելինածեւ, գլխածեւ : Երբ նոյն համախմբութեան մասերը ամենամանր կ'ըլլան և այնքան իրարու հետ սերտ միացած՝ որ ամենամին որոշեալ ձև մը չերեւիր բեկման ժամանակ, ասոնք կոչին հոծ կազմուածոյք : Այն հանքերը որ բիւրեղածեւ զուրկ են, կոչին Ասեծւք կամ Տօնուք (Արևակ, Սաթ), ինչպէս նաև հեղանիւթք և կազային հանքերն :

21). Հանքերը կարծր են : Ըլլան երկու հանք, յորոց մին զմիւսը կարենայ գծել առանց ինքն ալ փոխադարձար գծուելու այն ատեն գծողն անկից աւելի կարծր է :

Արդ այս կարեւոր յատկութիւնն ճանշնալու համար, ճնարուած է կարծրութեանց աստիճանն մը, որ կը պարունակէ նուազ կարծրէն դէպ ի առաւել կարծր աստիճանի հանքեր :

Դասաւորելիք հանքը համեմատելով այս աստիճանաց հետ, ըստ բաւականի դիրքաւ կը մամք գտնել այս կամ այն ինչ հանքին կարծրութեան աստիճանը : Ամենէն ընդունելիք աստիճանն է Մոխի, որ կը բազկանայ հետեւեալ 10 հանքերէն . 1⁰ Տարղուն, 2⁰ Գաճ, 3⁰ Կրաքար, 4⁰ Ծորնաքար, 5⁰ Խորանարդ, 6⁰ Արատոյ վէմ, 7⁰ Գաւարդ, 8⁰ Տպաղիոն, 9⁰ Կորինդոն, 10⁰ Ադամանդ : Երբ այս ամէն հանքերը պակսելու ըլլան այն ատեն ի հարկէ ամէն տեղ սովորական հանքեր կը գտնուին, որով նորագիւտ հանքի մը կարծրութիւնը որոշելու համար՝ պէտք է անոնց կարծրութեան հետ համեմատել : Տարղունի կարծրութեան հաւասար հանքերն կը գծուին անոյշ փայտի կտորով մը . այն հանքերն

Քը որ Գաճի հաւասար կարծրութիւն մը ունի՝ եղբն-գով կը գծուի : Կրաքարի կարծրութիւնը զրեթէ հաւասար է պղընձէ դրամի մը կարծրութեան . Ծոր-նաքարը անոյշ երկաթի հաւասար կարծրութիւն ունի . Խստաքարը հասարակ ապակոյ կարծրութիւնն ունի . Արաստոյ վեմն պողովատեայ սլաքաւ . միայն կրնայ գծուի, և պողովատի հարուածով կայծ կը հանէ . Գաւարզը և ուրիշ ասկից աւելի կարծր հանքեր կրնան դիմակալել պողովատի, և մուրճի զօրաւոր հարուածով պայծառ կայծեր կը հանեն :

(22). Առնելով հաւասար տարածոցով զանազան հանքեր և ասոնց կիխոն քննելով՝ կը տեսնեմք որ իրարու հաւասար կշիռ մը չունին : Համեմատութիւնն որ կայ ի մէջ հաւասար տարածոցով զանազան մարմեց, կո-չի իրենց տեսակարար կշխոն կամ իրենց վերբերական խոռութիւնն . իրեւ միութեան կշիռ ընդհանրապէս կ'առնուի զուտ ջրոյ 4⁰ խոռութիւնն : Գիտնալով որ 1 հարիւրորդամետք խորանարդ զուտ ջրոյ 4⁰ կը կըշ-ոէ մի զրամ, մինչեւ միենոյն տարածոցով Ոսկին 19 զրամ կը կշռէ և կրաքարը 2·7, զրամ դիւրաւ կը գտնուի տեսակարար կիխոն Ոսկոյ=19, և կրաքարի=2·7:- Մարմոյ մը կշխուը կը պակսի ջրոյ մէջ, հաւա-սարաշափ տեղի տուած ջրոյ քանակին, ուստի որպէս զի որոշեմք վերբերական խոռութիւնն այս ինչ մար-մոյ, պէտք է զայն թէ օդոյ և թէ ջրոյ մէջ կշռել, արտադրեալն որ կը գտնուի ի. մէջ օդոյ և տեղի տուեալ ջրոյ և կամ ծանրութեան կորուստն զոր կը կրէ մարմինն ջրոյ մէջ ընկղմեալ ժամանակ, մեզ կուտայ նորա վերբերական խոռութիւնն բաղդատմամբ ջրոյ խոռութեան հետ :

(23). Գրյու . հանքի մը գոյնը կրնայ ըլլալ յա-տուկ և հաստատուն ինչպէս (Մետաղաց, Ուշնայից, Գալէնեայց, Դահանակներու և այլն), և կամ պատա-հական և փոփոխական ինչպէս (Ծորնաքարի, Կրա-քարի, Գաւարզի, Կորինդոնի, Տպագիոնի և այլն): Շատ մը հանքեր բիւրեղեայ վիճակի մէջ անգոյն են, ապակոյ և ջրոյ պէս թափանցիկ : Հանքերուն ոմանց փոշին անգոյն կ'ըլլայ կամ սպիտակ՝ ինչպէս Աղերուն և Գոհարներուն, մինչդեռ բիւրեղացը պայծառ

և փոփոխական կ'ըլլայ : Մետաղաց փոշին կամ ման-րութին ճիշդ զանգուածոյն գոյնը և փայլը կը պա-հեն . շատ անգամ կը գտնուին հանքեր՝ որոց ներ-քին գոյնը արտաքնոյն չի նմանիր ինչպէս ի Ուշնայց :

(24). Կ'որոշուին մետաղական և անմետաղական գոյներ : Մետաղական գոյն ունին ամենայն մետաղք և հանքերն որ մետաղական տեսք մը ունին . զիսաւոր մետաղական զոյներն են Սպիտակ (Արծաթ, Սնդիկ, Սնագ), Մոխրագոյն (Գալէն, Ծարիր), Սեւ (Մագ-նիտաքար), Գեղին (Ոսկի, Ուշնա), Կարմիր (Պղինձ):

Ամենէն մաքուր անմետաղական գոյներն են . Զիւ-նագոյն սպիտակ (Արծանագործութեան սպիտակ կուճն) Գորշ մոխրագոյն (Կաւ), Թաւշեայ սեւորակ (Ոբսի-գաքար), Պերլինի կապտորակ (Շափիղա), Զմրուկս-տային կամաչ (Զմրուկս), Նարնջագոյն դեղնորակ (Ոսկեղառիկ), Որդան կարմիրագոյն (Յակինթ), Շագանակագոյն (Սլքաքար):

(25). Զանազան են հանքերու փայլունութիւնը: Կը գտնուին ամենափայլուն, պայծառ, թիւ պայծառ, և նսեմագոյն հանքեր, բաց աստի կը գտնուին նաև մե-տաղական, ալամաննդական, ուետնային, պարար-տագոյն, մարգարտագոյն, նարպագոյն, և ապա-կային պայծառութեամբ հանքեր :

(26). Հանքերու թափանցկութիւնը քիչ շատ փո-փոխական է . կան ապականման թափանցիկ հանքեր, բաց աստի կան նաև կիսամթափանց և նաև ան-մթափանց կամ դիմահար հանքեր : Շատ մը հանքեր՝ օրի-նակի համար իսլանտաքար և այլն Կրկին բեկրեման յատկութիւն ունին, այսինքն զասոնք գնելով որկիցէ առարկայի կամ գրութեան մը վրայ՝ զսնոնք կրկին կը տեսնեմք: Հանքերուն արտաքին տեսքերն են պայ-ծառութիւն, գունաւորութիւն, թափանցկութիւն: Այն հանքն որ մետաղական տեսք մը ունի, կ'ըլլայ գիմա-հար, մետաղանման պայծառ և գունաւոր, և նաև փո-շին գունաւոր . այն հանքերն որ չունին մետաղա-կերալ տեսք մը, առաւել կամ նուազ թափանցիկ են, և զորկ են մետաղական գոյնէ և փայլունութենէ, և շատ անգամ ասոնց փոշին անգոյն կ'ըլլայ :

(27). Շատ քիչ հանքեր իրենց կը ձգեն երկաթոյ

խարտն և կ'ազդեն մազնիտական ասղան վրայ (Մագ-նիտաքար, Խնձռաբոյս երկաթ). ասոնք Մազնիտա-կան հանքեր կոչին: Այլք շփմամբ, կամ ձնշմամբ, և կամ տաքնալով, թեթև մարմինները ձգեւու և վա-նելու յատկութիւն կը ստանան, այսինքն կ'ելեկորա-նան (Ծծումբ, Սաթ):

28). Հանքերէն շատերն մանաւանդ աղերու մեծ
մասը կը լուծուին ի ջուր։ Կանաչ արջասպի Համն
տոփիպ է, Նատրոնին՝ աղբալային, Պաղպեղին՝ քաղցր,
Ալումակին՝ աղային, Բորակի՝ զովարար, Անգղիական
աղի՝ դառն, և այլն։ Մի քանի հանք շատ թունաւոր
ըլլալով, անսոնց համն փորձելու ժամանակ շատ զգու-
շութիւն պէտք է ընել։ Շատ քիչ հանքեր հուտ ունին,
ինչպէս Քարիւղը, Նաւթը և այլն. այլք տաքցած
ժամանակ յատուկ հոտ մը կը բուրեն (Ծծումբ)։ Իսկ
Գաւարդ, Փօշնայ, մուրճի հարուած մը առնելով՝ հոտ
կը բուրեն։



ԻԳ. ՄԱՍՆ

Տարրաբանական յատկութիւնք հանքերու

29.) Հանքերուն՝ ճարտարարուեստից ամենամեծ օգտակար յատկութիւնն այն ատեն երկան կ'ելնեն՝ երբ զանոնք կը տարրալուծեմք, այսինքն տարրաբանական ազդակներով նոցա բնութիւնն կ'այլոփոխեմք, քննելով աննոց ջրոյ կամ ուրիշ հեղանիւթոց և հաստատուն մարմնոց հետ միանալու եղանակն :

30). Ջղոյ մէջ դիւրախալ (աղերն) գեղեցիկ բիւրեղեայ կերպարանք մը կ'առնուն, ազատ թողղով, կամ բարձրաստիճան ջերմութեամբ եռացընելով նոցա լուծմունքն. այս բիւրեղացեալ աղերն հաստատուն հանքին գոյնն և համն կ'ունենան: Միւնոյն լուծմունքէն կրնան բաժնութիւ բաղադրութեան տարերաց մէկ քանին հակազդակներու ձեռօք, ինչպէս օրինակի համար մետաղական երկաթոյ միջոցաւ կը հանեն կապոյտ արջասպէն պղինձ: — Կան հանքեր, ինչպէս Գաճը, կրաքարն և Գայլախազը, որք ջրոյ մէջ շատ քիչ լուծական են. շատ ժամանակ անցնելով՝ ասոնց և իրենց նմաններուն մեծամեծ զանգուածք ջրոյ աղդեցութեամբ կամ կ'այլափոխին և կամ բոլորովին կը լուծուին, երբեմ ջրոյ մեքենական զօրութեամբ խորտակուելով՝ հեռի տեղեր կը տարուին կը դիցուին:

Հեղանիթ մարմիններէն հանկերու վրայ ամենին
շատ զօրաւոր ազգեցութիւն ունին թթուուկի՝ ոք մինչև
կարողութիւն ունին նաև լուծել մետաղները, և հան-
քերու բաղադրութեանց տարերաց մի քանին ջնջել։
Երկաթաքարը, կրաքարը, ծծմբական թթուուտի կամ
քլոռայրածնական թթուուտի ազգեցութեամբ եռալով,
կը կորսնցընեն իրենց բնածխական թթուուտն։ այս
յատկութեամբ կ'որոշեմք այս հանկերը իրենց նման-
ներէն։ Անդիկը կը լուծէ զլուկին, զԱրծաթ, զԱնագ,
զՋննկ անոնց հետ յարազօդ մը կազմելով։

31). Հանքերու մեծ մասը, ըստ բաւականի ջեր-

մացընելով, կերպարանքնին կը փոխեն, մասամբ մը կամ բոլորովին հալելով, և կամ բնութիւննին փոխելով :

32). Հանգերուն պարունակած ցնդական տարրերն լանելու կամ հալեցընելու և կամ վերամբարձնելու համար՝ բաւական է զանոնք դնել ապակեայ փամփըշտի մը մէջ և սակաւ ինչ տաքցընել փոքրիկ աթուկի հրագի բոցով։ Գաճ և Նատրոն որ ամենաչոր փիճակի մէջ ալ ջուր կը պարունակեն՝ 100° ջերմութեանէն քիչ մը աւելի վեր ջերմութեամբ զայն կը կորսնցընեն և կը փոշիանան։ Ծծումբը, և ասոր նմաններն, Զառիկ, Սնդիկ և իրենց նման հանգերն, կը վերանան (sublimation), և նորէն անօթոյ վերին ցուրտ կողերուն վրայ կը նստին հաստատուն ամենափոքր մարմիններու կերպարանօք։

33). Ուրիշ շատ մը հանգեր հալելու կամ տարբաշխութելու համար, բարձրաստիճան ջերմութիւն կ'ուզեն, որ յառաջ կու գայ կենդանացընելով կրակին բոցը Արծարծիչ Եղէգով (Զւ 131) կամ դնելով զանոնք ամենասաստիկ ջերմացած վառարանաներու մէջ՝ ուր մեքենայով մը շարունակ օդոյ հոսանք կ'ուզուի։

34). Կան հանգեր որք կ'այրին յօդս բոցով և ցնդելով (օրի. Ռետինք, Աթթ, Ծծումբ, Գրչափար, Ադամանդ). այլք կը վերամբառնան առանց բոցի, բայց կը բուրեն յատուկ հոտ մը (Զառիկ), և կը կազմեն անբոց և անցնդական մարմոց պէս պայծառ գունով փոշիներ, որոնք նկարչութեան մէջ կը դորժածուին։

35). Հանգերը բացօթեայ տաքցընելով վառ ածխոյ ազդեցութեամբ, կը բաժնուին իրենց բաղադրեալ տարրերէն։ Օրինակի համար բարձրաստիճան ջերմութեամբ՝ կրաքարէն խոյս կուտայ թնածխական թթուուտը՝ մեալով ալրէն Զւ 131. Արծարցական զուտ կիր։ Ծանր մետաղներու ծիչ եղէգ։ մեծ մասը (Երկաթ, Պղինձ, Կապար,

Անագ, Արծաթ, և այլն) կը ստացուին՝ հալեցընելով իրենց հանածոյներն, և այս գործողութիւնը դիւրացընելու համար մետաղագործք կը գործածեն Ծորնաքար, կրաքար, Գայլախազ և այլն հալիչները, իսկ տարբագէտք, Նատրոն, Ոսկեբորակ։ Ասոնք մետաղին հետ միացած նիւթոց հետ՝ կը կազմեն Ալոտք, որք կը լողան մետաղական հալոցին երեսը, և ապականը-ման տեսք մը կ'ունենան որ յառաջ գայ մետաղական թթուուկներէն։



ՑԱՆԿ

ՀԱՐՑԱՓՆՆՈՒԹԵԱՆ

1. Կախագիտելիք . - Հանքաբանութեան վրայ կարեսը և օդակար ծանօթութիւնք . Ա . - 42 :

Բ. ՄԱՍՆ

2. Աթնողորուային օդ . - Ուրիշ կազեր . - Զուր . - Ձիւն . - Եղեամն . - Կարկուտ . - Սառ . - Ջերմուկներ . 15 - 24 :

Բ. ՄԱՍՆ

3. Աղուճակ . - Մարիանիստ . - Կասրոն . - Պաղլեղ . - Կանաչ Արջասպ . - Կապոյտ Արջասպ . - Սպիտակ Արջասպ . - Անդրիական աղ . - Գլաւքերաղ . - Անուշաղը . - Ոսկեբորակ . - Ոսկեբորակական թժուռուտ . - Աղք . 22 - 55 :

Գ. ՄԱՍՆ

4. Գաճ . - Բնածխատ կրոյ . - Արագոնեան քար . - Ծորնիս . - Խարուսիկ քար . - Կրաքարինք . 35 - 45 :

Դ. ՄԱՍՆ

5. Երկաթաքար . - Կըռունաքար . - Թութիաքար . - Բնածխատ զընկոյ . - Բնածխատ կապարը . - Հրաքար . - Ուրենիստ . - Շեւլիս . - Կըռունիք . 45 - 48 :

Ե. ՄԱՍՆ

6. Խաժաքար . - Դահնանակ . - Ոսկեգահանակ . - Դահնանակ . - 49-50 :

Զ. ՄԱՍՆ

